

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-396-26.11.2013-ԳԲ-010/0) վերաբերյալ:

1. 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող՝

1) «ե» կետով առաջարկվում է ձկների ձվադրման, ինչպես նաև մանրաձկան ձևավորման և զարգացման փուլում կասեցնել գործող ՀԷԿ-երի աշխատանքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանրաձկան ձևավորման և զարգացման փուլը կրկնվող, շարունակական պրոցես է, իրականում ՀԷԿ-երի աշխատանքը փաստացի ոչ թե կկասեցվի, այլ կդադարեցվի:

Միաժամանակ ընդունելի է ձկների ձվադրման ընթացքում կասեցնել Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված այն հիդրոէլեկտրակայանների աշխատանքը, որոնք չեն իրականացրել համապատասխան բնապահպանական միջոցառումներ՝ ձկնապաշտպան կառույցներ, ձկնուղիներ և այլն.

2) «զ» կետի համաձայն արգելվում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում ՀԷԿ-երի կառուցումը: Սևանա լճի ավազանում նոր ՀԷԿ-երի կառուցման արգելումն ընդհանուր առմամբ ընդունելի է: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկված է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-010-21.06.2012-ԳԲ-010/0), որով առաջարկվում է օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետում կատարել համանման լրացում.

3) «է» կետի համաձայն արգելվում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում շահագործվող ՀԷԿ-երին նոր լիցենզիաներ տալը: Առաջարկության վերաբերյալ հայտնում ենք, որ «նոր լիցենզիաներ» արտահայտությունը հստակեցման կարիք ունի, քանի որ այն կարող է վերաբերել ոչ միայն լիցենզիայում ամրագրվող էլեկտրական էներգիայի արտադրության գործառնություն, այլ նաև կայանների վերականգնման, վերազինման և այլ գործառնություններին: Եթե այն վերաբերում է լիցենզիա ունեցող անձանց ՀԷԿ-երի կառուցման նոր լիցենզիաներ տրամադրելուն, ապա այդ սահմանափակումը նախորդ կետով կիրառելի է, իսկ եթե վերաբերում է տրամադրված լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգմանը, ապա այն ընդունելի չէ, քանի որ կհանգեցնի կատարված ներդրումների փոխհատուցման խնդիրների:

2. 3-րդ հոդվածի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ օրենքով ամրագրված Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովն ընդամենը փորձաքննություն իրականացնող, եզրակացություն կամ առաջարկություն ներկայացնող մարմին է և որևէ ժամանակացույց հաստատելու իրավասությամբ օժտվել չի կարող:

Բացի դրանից՝ անտեսված է, որ՝

1) համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիաների կասեցումը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունն է.

2) շահագործվող ՀԷԿ-երի ձկնուղիների և ձկնապաշտպան այլ կառույցների աշխատանքի ու ջրառի ռեժիմների նկատմամբ հսկողություն իրականացնելուն ուղղված համապատասխան գործառույթները վերապահված են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանն ինչպես ՓՀԷԿ-երի նախագծերի բնապահպանական փորձաքննության իրականացման փուլում, այնպես էլ ջրօգտագործման թույլտվությունների ռեժիմների հսկողության առումով:

3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծը ներկայացված տեսքով համարում է անընդունելի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻՔՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Եզրակացություն

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

Օրենքի ընդունումը կենդանական աշխարհի վրա կունենա դրական ազդեցություն՝ հաշվի առնելով, որ նախագծի ընդունման արդյունքում կվերականգնվի Սևանա լիճ թափվող գետերի և ձվադրավայր հանդիսացող գետերի ջրի բնականոն հոսքը և հնարավորություն կստեղծվի էնդեմիկ ձկնատեսակների, մասնավորապես՝ Սևանի իշխանի, կողակի և բեղլուի բնականոն վերարտադրության և ձկնային պաշարների ավելացման համար:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում կենդանական աշխարհի օբյեկտների վրա կարող են առաջանալ բացասական հետևանքներ:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում՝ առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման պարագայում՝ Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը կկասեցվի ձկների ձվադրման ընթացքում:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են գոլազղային ծառայությունների շուկաների հետ:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *արգելվում է Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցով ձկների ձվադրման ընթացքում, ինչպես նաև մանրածկան ձևավորման ու զարգացման փուլում լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը՝ ջրի հոսքին և ձկների տեղաշարժին չխոչընդոտելու նպատակով և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կապակցությամբ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա անմիջական ազդեցության գոտում արգելել՝

1) Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցով ձկների ձվադրման ընթացքում, ինչպես նաև մանրածկան ձևավորման ու զարգացման փուլում, Սևանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը,

2) հիդրոէլեկտրակայանների կառուցումը,

3) շահագործվող հիդրոէլեկտրակայաններին նոր լիցենզիաներ տալը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև այն, որ հիդրոէլեկտրակայանների շահագործման համար նախատեսված է պետական տուրք՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կոնկրետ գնահատել հնարավոր չէ՝ հաշվի առնելով վիճակագրական կամ որևէ այլ տեղեկատվության բացակայությունը:

Բացի այդ «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի թե ընդունումը և թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի և ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Սեւանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ 190 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասի դ) ենթակետում «գործարկումը» բառից հետո վերջակետը փոխարինել միջակետով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր ե), գ), է) ենթակետերով հետեւյալ բովանդակությամբ.

«ե) սույն օրենքի 19-րդ հոդվածով ստեղծված հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցով ձկների ձվադրման ընթացքում, ինչպես նաեւ մանրածկան ձեւավորման ու զարգացման փուլում, կասեցնել Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը՝ չխոչընդոտելով ջրի բնականոն հոսքին եւ ձկների ու ջրային այլ կենդանիների տեղաշարժին.

գ) հիդրոէլեկտրակայանների կառուցումը.

է) շահագործվող հիդրոէլեկտրակայաններին նոր լիցենզիաներ տալը:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«6. Հանձնաժողովը Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններ շահագործող տնտեսվարող սուբյեկտներին ներկայացնում է ձկների ձվադրման ընթացքում հիդրոէլեկտրակայանների աշխատանքի կասեցման հաստատված ժամանակացույցը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման, լճում ու նրա ջրահավաք ավազանում տնտեսական եւ այլ գործունեության կարգավորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը կասեցնել ձկների ձվադրման ընթացքում:

«Սեւանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով ստեղծված Սեւանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցով ձկների ձվադրման ընթացքում կկասեցվի Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների աշխատանքը՝ չխոչընդոտելով ջրի բնականոն հոսքին եւ ձկների ազատ տեղաշարժին:

Սույն օրենքի նախագծի ընդունման պարագայում կվերականգնվի ջրի հոսքը եւ հնարավորություն կստեղծվի ձկների ազատ տեղաշարժի համար, ինչի արդյունքում տեղի կունենա ձկների բնականոն վերարտադրություն եւ ձկնապաշարների ավելացում: